Հաստատված է
ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
1999 թ. դեկտեմբերի «28» N37 որոշմամբ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ

(մեծածախ գնորդ-վաճառող - բաշխող)*

« » 199 թ. ք. _____

_____
,
(վաճառող ընկերության անվանումը)
_____

այսուհետև՝ Վաճառող, ի դեմս _____

_____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, մի կողմից, և _____

_____,
(ընկերության անվանումը)

այսուհետև՝ Գնորդ, ի դեմս _____

_____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, մյուս կողմից, այսուհետև համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. **Պայմանագրի առարկան**

1.1 Վաճառողը վաճառում, իսկ Գնորդը գնում է էլեկտրաէներգիա՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Կողմերի առևտրային փոխհարաբերությունները կանոնակարգվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն Պայմանագրով:

* Սույն պայմանագիրը կնքվում է «Հայէներգո» ՊՓԲԸ-ի և բաշխիչ ընկերության միջև:

1.3 Վաճառողի կազմում գտնվող կենտրոնական կարգավարական ծառայության փոխհարաբերությունները Գնորդի հետ, ինչպես նաև Գնորդի փոխհարաբերությունները «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՊՓԲԸ-ի կամ արտադրող կայանների հետ կանոնակարգվում են սահմանված կարգերով, հրահանգներով և պայմանագրերով:

2. **Էլեկտրաէներգիայի գինը**

2.1 Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) կողմից Վաճառողի առաքած էլեկտրաէներգիայի համար սահմանված՝_____ դրամ/կՎտժ առավելագույն սակագնից ելնելով՝ էլեկտրաէներգիայի վաճառքի պայմանագրային գինը սահմանվում է _____ դրամ/կՎտժ (ներառյալ ԱԱՀ):

2.2 Հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման դեպքում, մինչև նոր Պայմանագրի ուժի մեջ մտնելը, էլեկտրաէներգիայի նոր սակագինը ուժի մեջ է մտնում հանձնաժողովի կողմից սահմանած ժամկետից:

3. **Կողմերի պարտավորությունները**

3.1. Վաճառողը պարտավորվում է՝

3.1.1. Ապահովել էլեկտրաէներգիայի առաքումը Գնորդի էլեկտրական ցանց սույն Պայմանագրի N1 հավելվածում նշված չափաքանակներով և ռեժիմներով:

3.1.2. Ապահովել հաղորդողի (արտադրողի) հետ Գնորդի հաշվեկշռային պատկանելության սահմանազատման կետում էլեկտրաէներգիայի որակին գործող ստանդարտներով ներկայացված պահանջների կատարումը՝ այդ թվում հաճախության շեղումը՝ ±0.2 5 Հց սահմաններում:

3.1.3. Էլեկտրաէներգիայի որակի խախտման դեպքում այն վերականգնել ոչ ուշ, քան _____րոպեի ընթացքում:

3.1.4. Հայտնել Գնորդին վերջինիս բաշխիչ ցանցերին միացված հաղորդողի (արտադրողի) էլեկտրատեղակայանքներում կատարվող նորոգման աշխատանքների ժամկետների մասին՝ դրանք սկսելուց ոչ ուշ, քան 48 ժամ առաջ՝ Գնորդի նախնական համաձայնությունն ստանալու

համար, եթե նորոգման ընթացքում պետք է հոսանքազրկվեն Գնորդի ցանցերը (մի մասը) կամ կատարվեն բեռի սահմանափակումներ:

3.1.5. Գնորդին անհապաղ տեղեկացնել էներգահամակարգում վթարների վերացման (կանխարգելման) համար անհետաձգելի միջոցառումների ձեռնարկման հետևանքով էլեկտրաէներգիայի և հզորության վթարային սահմանափակումների և դրանց տևողության մասին:

3.1.6. Ապահովել հաղորդողի (արտադրողի) էլեկտրատեղակայանքներում տեղադրված N2 հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքերի տեխնիկական սպասարկումը և պահպանումը՝ ըստ գործող կարգի:

3.1.7. Կողմերի սահմանած և հաղորդողի (արտադրողի) հետ համաձայնեցված կարգով ապահովել Գնորդի լիազոր ներկայացուցչի մուտքը հաղորդողի (արտադրողի) տարածք՝ հաշվառքի սարքերի ցուցմունքները գրանցելու և սահմանված կարգով անհրաժեշտ զննումներ կատարելու համար:

3.1.8. Գնորդին անհապաղ տեղեկացնել հաղորդողի (արտադրողի) էլեկտրատեղակայանքներում տեղադրված առևտրային հաշվառքի սարքերի խափանման մասին և պայմաններ ստեղծել դրանք վերացնելու ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում: Նշված ժամանակահատվածում հաշվառքի սարքերի չգրանցած էլեկտրաէներգիայի քանակը հաշվել վերստուգիչ հաշվիչների ցուցմունքներով, իսկ վերջիններիս անսարքության կամ բացակայության դեպքում՝ ըստ տվյալ ամսվա միջին օրական ծախսի:

3.1.9. Յուրաքանչյուր տարի մինչև դեկտեմբերի 10-ը Գնորդին ներկայացնել վերջինիս կողմից ներկայացված էլեկտրաէներգիայի սպառման և առավելագույն հզորության հաջորդ տարվա համաձայնեցված չափաքանակների հայտը:

3.2. Գնորդը պարտավորվում է՝

3.2.1. Գնել Վաճառողի առաքած էլեկտրաէներգիան՝ ըստ սույն Պայմանագրի N1 հավելվածում նշված պայմանագրային չափաքանակների, հաշվի առնելով սույն Պայմանագրի 3.2.5. կետով սահմանված կարգով կատարված փոփոխությունները:

3.2.2. Յուրաքանչյուր տարի մինչև հոկտեմբերի 1-ը Վաճառողի համաձայնեցմանը ներկայացնել էլեկտրաէներգիայի սպառման հաջորդ տարվա չափաքանակների և ռեժիմների հայտը՝ ըստ սույն Պայմանագրի N1 հավելվածի:

3.2.3. Յուրաքանչյուր ամիս՝ մինչև տվյալ ամսվա 20-ը Վաճառողի համաձայնեցմանը ներկայացնել էլեկտրաէներգիայի սպառման հաջորդ ամսվա չափաքանակների և ռեժիմների մասին առաջարկությունը.

4. **էլեկտրական էներգիայի քանակի չափումը**

4.1. Վճարման ենթակա էլեկտրաէներգիայի քանակ է համարվում հաղորդողի (արտադրողի) և Գնորդի հաշվեկշռային պատկանելության սահմանազատման կետերում Գնորդին առաքված էլեկտրաէներգիան:

Հաշվեկշռային պատկանելության սահմանազատման կետերը, էլեկտրաէներգիայի առևտրային և /կամ/ վերստուգիչ հաշվառքի սարքերի տեղադրման վայրը նշվում են սույն Պայմանագրին կից հաշվեկշռային պատկանելության սահմանազատման ակտում (հավելված N2):

4.2. Էլեկտրաէներգիայի ամսական ծախսի հաշվարկման համար առևտրային հաշվառքի սարքերի ցուցմունքները գրանցում են Կողմերի լիազոր ներկայացուցիչները՝ համատեղ, հաշվարկային ամսվա վերջին օրվա ժ. __-ին, որի մասին կազմվում է երկկողմ ակտ (մեկական՝ Կողմերի համար) և հավելվում էլեկտրաէներգիայի առուվաճառքի ակտին (հավելված N4):

Կողմերից մեկի պահանջով կարող է կատարվել հաշվառքի սարքերի ցուցմունքների միջանկյալ գրանցում:

Կողմերից մեկի չներկայանալու դեպքում հաշվառքի սարքերի ցուցմունքների գրանցումը կատարվում է միակողմանի:

4.3 Գնորդին առաքված էլեկտրաէներգիայի համար Վաճառողն ու Գնորդը համատեղ կազմում են էլեկտրաէներգիայի առուվաճառքի ակտ (հավելված N3), որը Կողմերի հաստատումից հետո համարվում է իրավական փաստաթուղթ:

4.4. Առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության վերաբերյալ կասկածի դեպքում, Կողմերից մեկի պահանջով, սույն Պայմանագրի 8.1. կետով սահմանված կարգով, կատարվում է տվյալ հաշվառքի սարքերի ստուգում և բնականոն աշխատանքի վերականգնում, անհրաժեշտության դեպքում՝ փոխարինում:

4.5. Նվազագույն բեռնվածքի ռեժիմում, երբ տեխնիկապես անհնար է դառնում հաշվառքի սարքերի աշխատանքը, ղեկավարվելով ՀՀ էներգետիկայի նախարարության 1998թ. հունիսի 9-ի N169-ԳՄ հրամանով հաստատված «Էլեկտրաէներգիայի և հզորության հաշվառման հրահանգով», Գնորդի կողմից այդ ռեժիմում օգտագործվող էլեկտրաէներգիայի հաշվարկի տվյալների փոխհամաձայնեցված մեծությունները սահմանում են Կողմերը և հավելում սույն Պայմանագրին:

4.6. Առևտրային հաշվառքի սարքերը հաղորդողի (արտադրողի) և Գնորդի հաշվեկշռային պատկանելության սահմանազատման կետից դուրս տեղադրելու դեպքում էլեկտրաէներգիայի փաստացի առաքումը որոշելու համար առևտրային հաշվառքի սարքերով հաշվառված էլեկտրաէներգիայի քանակին գումարվում (կամ նրանից հանվում) է հաշվառքի սարքերի տեղադրման և հաղորդողի (արտադրողի) ու Գնորդի հաշվեկշռային պատկանելության սահմանազատման կետերի միջև ընկած ցանցի տարրերում էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորստի չափը: Վերջինիս հաշվարկը «Էլեկտրաէներգիայի և հզորության հաշվառման հրահանգով» սահմանված կարգով կատարում է Վաճառողը և համաձայնեցնում Գնորդի հետ:

5. **Վճարման կարգը**
(**սահմանում են Կողմերը**)

_____
_____
_____
_____
_____

6. **Կողմերի պատասխանատվությունը**

6.1. Վաճառողի.

6.1.1. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով Գնորդի կրած վնասը հատուցում է Վաճառողը՝ սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.1.2. Գնորդին էլեկտրաէներգիայի պայմանագրային չափաքանակից պակաս մատակարարելու դեպքում, երբ այն կապված չէ սույն Պայմանագրի 7-րդ մասով և 8.4. կետով նախատեսված

հանգամանքների հետ, Վաճառողը փոխհատուցում է Գնորդի կրած վնասը՝ սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.1.3. Վաճառողը պատասխանատվություն է կրում հաղորդողի (արտադրողի) միոյթներում տեղադրված հաշվառքի սարքերի, դրանց միացման սխեմաների՝ սահմանված պահանջներին համապատասխանության, ինչպես նաև կապարակնիքների ամբողջականության պահպանման համար:

6.2. Գնորդի.

6.2.1. Գնորդի մեղքով Վաճառողի օպերատիվ կառավարման կամ կարգավարման ներքո գտնվող էներգատեղակայանքների աշխատանքային ռեժիմների խախտման հետևանքով առաջացած վնասը փոխհատուցում է Գնորդը՝ սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

6.2.2. Սույն Պայմանագրի N1 հավելվածում նշված էլեկտրաէներգիայի օգտագործման պայմանագրային չափաքանակները, ներառյալ 3.2.5. կետով սահմանված կարգով կատարված լրացումները, Գնորդի կողմից չպահպանելու դեպքում կիրառվում են հետևյալ տույժերը՝

_____

_____

_____

(Խախտումների համար սահմանված ֆինանսական տույժերը չպետք է գերազանցեն առուվաճառքի էլեկտրաէներգիայի ամսական արժեքի 1 %-ը:)

7. **Ֆորս-մաժորային իրավիճակներ**

7.1. Կողմերն ազատվում են պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվությունից, եթե դրանք հետևանք են արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների (տարերային աղետներ, ռազմական գործողություններ, էներգապաշարների (վառելիք, ջուր) մատակարարման համակարգերի, ազգային կամ բաշխման էլեկտրական ցանցի վթարների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սահմանափակումների), տվյալ պայմաններում լիցենզավորված անձից անկախ առաջացած անհաղթահարելի ուժի հետևանքների, որոնք, մասամբ կամ ամբողջությամբ, անհնար են դարձնում լիցենզավորված գործունեության իրականացումը:

7.2. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց վերացման հնարավոր ժամկետները:

7.3. Ֆորս-մաժորի ավարտից հետո Կողմերը պարտավոր են անմիջապես ձեռնարկել միջոցներ՝ իրենց Պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

7.4. Ֆորս-մաժորի սկիզբը և ավարտը պետք է հայտարարի այդ պայմանների առկայությունը հավաստող՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը:

8. **Լրացուցիչ պայմաններ**

8.1. Առևտրային և վերստուգիչ հաշվառքի սարքերն ու դրանց միացման շղթաները ՀՀ էներգետիկայի նախարարության «էլեկտրական էներգիայի և հզորության հաշվառման հրահանգով» սահմանված կարգով ստուգում և կապարակնքում են Կողմերը: Նշված սարքերի և դրանց միացման շղթաների ստուգման, նորոգման և կարգաբերման աշխատանքները կատարվում են Կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ և ձևակերպվում երկու օրինակից կազմված համապատասխան ակտով (մեկական՝ յուրաքանչյուր Կողմի համար):

8.2. Առևտրային և վերստուգիչ հաշվառքի սարքերի սպասարկումը կատարվում է Վաճառողի (նրա լիազոր ներկայացուցչի) կամ Գնորդի կողմից՝ ըստ պատկանելության:

8.3. Էլեկտրաէներգիայի որակի հսկումը և գրանցումը կատարվում է՝

8.3.1. հաճախությունը՝ էներգահամակարգի ԿԿԾ-ում տեղակայված գրանցող հաճախաչափով.

8.3.2. լարումը՝ վաճառքի կետերում տեղակայված գրանցող (չափիչ) սարքերով (վաճառքի կետերի ցանկը նշվում է N2 հավելվածում):

8.4. Վթարային իրավիճակների սկիզբն ու ավարտը հաստատում է Վաճառողի ԿԿԾ-ն՝ այդ մասին տեղեկացնելով Գնորդին:

9. **Վեճերի լուծումը**

Պայմանագրի կատարման շուրջ Կողմերի միջև առաջացած վեճերը հնարավորության սահմաններում լուծվում են բանակցությունների միջոցով, անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ իր կողմից սահմանված կարգով:

Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

10. **Պայմանագրի գործողության ժամկետը**

10.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի կողմից գրանցման պահից՝ _____ մինչև _____ 2000թ. գործողության ժամկետով:

10.2. Պայմանագիրը կարող է վերանայվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում: Վերանայված Պայմանագիրը պետք է գրանցվի Հանձնաժողովում:

10.3. Պայմանագիրը կազմված է երեք օրինակից՝ մեկական յուրաքանչյուր Կողմի և Հանձնաժողովի համար:

11. **Հատուկ պայմաններ***

(լրացնում են Կողմերը)

_____

_____

_____

_____

_____

_____

12. **Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածների ցանկը**

Հավելված N1 Էլեկտրաէներգիայի սպառման և հայտավորված հզորության Պայմանագրայի չափաքանակները

Հավելված N2 Սահմանազատման կետերը և հաշվառքի սարքերի տվյալները

Հավելված N3 Էլեկտրաէներգիայի առուվաճառքի ակտ

Հավելված N4 Առևտրային և վերստուգիչ հաշվիչների ցուցմունքների գրանցման ակտ

* չպետք է հակասեն սույն Պայմանագրին և ՀՀ գործող օրենսդրությանը

13. **Կողմերի իրավաբանական հասցեները և հաշվարկային համարները**

Գնորդ	Վաճառող
ՀՀ, ք. Երևան, Աբովյան փ., 27	Հասցեն_____
Հ/h 220701 Արդշինբանկի	Հ/h _____
գործառնական վարչություն	_____
Հեռախոս	Հեռախոս
Հեռատիպ	Հեռատիպ
Ֆաքս	Ֆաքս
Գործունեության Գործունեության	
լիցենզիայի N	լիցենզիայի N
Ղեկավար	Ղեկավար
_____	_____
Կ.Տ.	Կ.Տ.

ՀՀ էներգետիկայի հանձնաժողով

Գրանցված է «___» _____ 199__ թ

Գրանցման N _____ Կ.Տ.

Պատասխանատու _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)